

օգնական: Հ. Մինաս կը շրջէր «խալիփախ, ճիւղպէ, եւ սեաւ թէռլէք փապուճ», հագած, Հայոց քահանաներուն նման, փիլըն կ'առնուր միայն եկեղեցւոյ մէջ. իսկ Արքեպ.ն եւ միւս քահանայն ունէին «շափղա եւ ղունտուրա»:
 Հ. Մինաս սերտ բարեկամութիւն կը հաստատէ տեղւոյն Հայոց Առաջնորդին եւ քահանայից հետ, կաթողիկէ ժողովուրդը կը յորդորէ՝ որ 12 հոգաբարձուներէ վարչութիւն մը կազմեն եւ եկեղեցւոյ ու դպրատան կառավարութիւնը ձեռք առնուն եւն: Ասոր վրայ 1821 Ապրիլի վերջերը կառավարիչ Վարդերեսեւիչէ հրաման կու գայ Հ. Մինասին, որ պաշտօնական վկայականներու սկզբնագրերն ղըկէ իրեն, եւ առ ժամն ետ կենայ քարոզելէ եւ խոստովանցընելէ. վասն զի լատին Մետրապոլիտն ամբաստանութիւն եկած էր եւ խնդիրը պիտի քննուէր: Ծանօթ չէ եզրակացութիւնը, սակայն նոյն միջոցին Հ. Աթանաս կը հաստատուի Օդեսսա, եւ Հ. Անանիա ճելալեան ի Ղարասուպազար, Հ. Մինասին քով:

Հ. Սրապեան Անտոնեան Միաբանութեան դիւանի ժամանակակից գրութեանց համեմատ կ'աւանդէ (Հ. Ա. 1903, էջ 201) թէ Անտոն Արքեպ. 1822ին վախճանած եւ ի Ղարասուպազար թաղուած ըլլայ, սակայն հետեւեալ պարագաները չեն ձայնակցիր ասոր. վասն զի Ղարասուպազարի այժմու ադմինիստրատոր Հ. Մանուէլ Վ. Մաշուրեան, Վիեննացի Մխիթարեան, ի պատասխանի հարցմանցս կը գրէ